«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի

ԽՈՐՀՐԴԻ

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20/07/27-01

ք. Երևան	27.07.2020թ., ժամը՝ 10:00
Խորհրդի նախագահ՝	Վահե Բադալյան
Խորհրդի անդամներ՝	Վիգեն Բադալյան
	Հարություն Համբարձումյան
Քարտուղար՝	Աննա Սարգսյան
Հրավիրվածներ՝	Հակոբ Ղոնջեյան
	Կամո Մայիլյան
Օրակարգ	
1. «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տեղաբաշխված դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի չեղարկման հարցը:	

Խորհրդի նախագահ՝ պարոն Վահե Բադալյանը ողջունեց ներկաներին և առաջարկեց անցնել օրակարգի հարցերի քննարկմանը:

- Օրակարգի հարցը ներկայացրեց Հակոբ Ղոնջեյանը: Նա ներկայացրեց «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 24 հուլիսի 2020 թվականի N ՑՊ-024-07/20 որոշումը և «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի 12-րդ կետը, որոնց համաձայն, չեղյալ է համարվում «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10% արժեկտրոնային տոկոսադրույքով, 4 400 հատ անվանական, դրամային արժեկտրոնային պարտատոմսերի (AMFSCRB23ER3) տեղաբաշխումը: Զեկուցողն առաջրկեց ըստ ունեցած հիմքերի չեղյալ համարել ընկերության կողմից սույն թվականի հուլիսի 9-ին տեղաբաշխված դրամային պարտատոմսերը:

Ներկաներն արտահայտեցին իրենց կարծիքները, այնուհետև Հակոբ Ղոնջեյանի կողմից առաջադրված հարցը դրվեց քվեարկության: Քվեարկությունն անցավ միաձայն, կողմ 3, դեմ 0:

Խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել սույն թվականի հուլիսի 9-ին տեղաբաշխված դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի չեղյալ համարումը:
2. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Վահե Բադալյան _____

Վիգեն Բադալյան _____

Հարություն Համբարձումյան _____

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի

ԽՈՐՀՐԴԻ

FASTCREDIT

ք. Երևան

2020թ.Հուլիսի 27-ին

Ժամ՝ 10:00

ՈՐՈՇՈՒՄ N 20/07/27-01

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի չեղարկումը հաստատելու վերաբերյալ

Քննարկելով «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի չեղարկման հարցը **Խորհուրդը որոշեց՝**

1. Հաստատել սույն թվականի հուլիսի 9-ին տեղաբաշխված դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի չեղյալ համարումը:
2. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ _____ **Վահե Բաղալյան**

Խորհրդի քարտուղար՝ _____ **Աննա Սարգսյան**